բացի երկուսից (№ 1 և № 5), որ բնաւ չեն յիշում, բոլորն էլ ինչպէս և Ջալաթ բացատրողը ունեն Ջալալի[1], որ մեզ թուում է ճշտագոյնը և Ջալալ անուան սեռականը։

Ձիերը ընդհանրապէս կոչւում են երկրի անունով. ինչպէս այժմ մեզնում ասում ենք Ղարաբաղի ձի, Արաբիոյ ձի՝ Արաբաթ, և նայելով գոյնին. ինչպէս ճերմակ՝ Մուշեղինը, դեղին—կարմիր՝ Դորաթը, սև՝ Ղարագայտան[2] (ղարագատա=սևացեղ), Քէօռ-օղլու Ղրաթը և Տրգատ—Արտաշէսինը. բոզ ձին Բոզ-դիդաֆին և Ս. Սարգսինը, ճարտուկ[3] ճանճկէն՝ Տիրանինը և այլն։ Բայց իմաստաւորի տիրոջ անունով, Ս. Սարգսի, Դիդաֆի, Տիրանի, Մուշեղի, Քէօռ-օղլու, Ռուստամի ևն. այսպէս էլ, կարծում եմ այստեղ է։

Արդ ԺԳ. դարում Սիւնիքում կայ մի հռչակաւոր հայ իշխան Հասան Ջալալ Դօլա (1214—1261) «Տէր Խաչենոյ», «Մեծ իշխան Խաչենոյ և կողմանցն Արցախոյ», «իշխանաց իշխան արքայաշուք», «Մեծ կողմնակալ», «Ինքնակալ իշխանաց իշխան», «Իշխան Խաչենոյ և Ըռանայ», «Արքայ» և «Մեծ արքայ» տիտղոսներով կոչուած մեր յիշատակարաններում, արձանագրութեանց մէջ և պատմագիրներից։ Սա խնամութեամբ կապուած է եղել Արղութեանց, Տարսայիճ Օրբէլեանի, Թաթարների (Ռուզուքան—Ռուզան) և մեր Ռուբինեան հարստութեան հետ։ Եղել է Թաթարստանում և մասնակցել Թաթարների արշաւանքներին Իկոնիոյ Ղայասէդդին Քայ Խոսրով Գ.-ի դէմ և հասել ուրիշների հետ մինչև Կարին, Երզնկայ և Սեբաստիա։ Այս արշաւանքներին, որ աւելի մի յաղթական թափորի է նմանել, ազատել է «յայտնի և գաղտնի» շատ քրիստոնեայ գերիներ։ Սիրելի է եղել Բաչուին, Զարմաղանին, այնուամենայնիւ մոռոլ Բուղան,—անուանակից Թուրք Բուղայի, Զոջանց վէպում Բաթմանայ Բուղէի,—քանդում է Ջալալի բերդերը, չարչարում նորան, բայց Ջալալը Ոսկէ—Օրդայի խան Բատիի որդու

---

1. «Քուռկիկ—Ջալալին» № 2 (Զ. էջ 21—24 եւ այլն.). № 5 (Բ. փոփոխակ. Գ. էջ 25. իսկ 36 էջում երկու անգամ «Քուռկէ—Ջալին». երեւի սխալմամբ). № 7 (էջ 25. 26. 71. 72). Քիւռկիկ—Ջալալին № 8 (էջ 6 32—35. 41). № 4 (Գ. էջ 104). № 9 (էջ 381—382 եւ այլն) եւ Քիւռկիկ—Ջալալէն № 11 (էջ 22. 31). որ ունի եւ Քէօռկիկ եւ Քէօռիկ Ջալալին (էջ 29) ձեւերը. եւ «Քիւռիկ Ջալալին» № 4 (Ա. եւ Բ. փոփոխակներով. Գ. էջ. 104—107 եւ այլն). № 10 (էջ 428. 410) եւ № 11 (էջ 19). վերջապէս «Քուռիկ Ջալալին № 6 (էջ 523 2).

2. Գարեգին սարկ. Ցովսէփեան. Փշրանքներ. Ջան-Փոլադ էջ (90—101). 94. Թիֆլիս 1893.

3. «ճարտուկ» եւ «ճերմակ» բառերը տես եւ H. Hübschmann-ի Armenische Grammatik, էջ 189—190. Leipzig 1895: